

## ԼԻԼԻԹ ՄԵՅՐԱՆՅԱՆ

### ԱՍՏՎԱԾԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՒԶԵՎ ԱՍՏՎԱԾԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Տառապանքով աստվածացած մա՞րդն ես դու՛,  
թե ոչ՝ Աստված՝ գթությունով մարդացած.  
Քու ձևի ձևն է մարդու,  
Կյուրամա քու խորհուրդիդ մեջ Աստված...  
Վ. Թեքեյան

Աստվածերգությունը, Վահան Թեքեյանի ստեղծագործության կարևոր թեմաներից մեկը լինելով հանդերձ, շատ զիշ է ուստամահրվել: Եղած գնահատականներում կա երկու տարամեռ ընկալում. միատիկա կամ կատարելության ձգտում, արդարության այլաբանական մարմնավորում:

Լ. Ասմարյանը Թեքեյանի աստվածերգության հիմքում կատարելության ձղգտումն է տեսանում դրան տալով միանգամայն մարքսիստական բացատրություն, ըստ որի կենսական հարցերի պատասխանը կյանքում չգտնելով՝ բանաստեղծը որոնել է կրոնի մեջ: «Աստված այլաբանորեն մարմնավորում է արդարությունը, որը փաստորեն կյանքում գոյություն չունի».- գրում է ան և շարունակում, - ճիշտ է, սկզբում ել միատիկական պամերը բանաստեղծի ստեղծագործության մեջ եղել են, բայց զիշ: Եղեռնի ազդեցությամբ, դրան հետևող տարագրի անորոշ վիճակում, բանաստեղծը մի կողմից հայրենասիրական սրտառուց խոսքի է դիմում, մյուս կողմից ուզում է եզր փնտիրել միատիկայի մեջ»<sup>1</sup>:

Իսկ ըստ Օ. Նարդունու՝ Թեքեյանին միատիկ են անվանում «Տեր» բառի պատճառով, որը շատ է գործածում: «Թեքեյանի «Տերը» ինքն է, և ան ինքզինք կկանչե, ան կփորձե ճշտել դեմքը մեծ անհատին, որ պիտի հաղթեն: Ու կմնա ամհատապաշտ բանաստեղծ մը»<sup>2</sup>: Վահեն Վահիյանի որակմամբ, Թեքեյանը հեռու է Աստծո միատիկ ընկալումից. Առաջամար «Աստվածը իմացական ու բարոյական կատարե-

<sup>1</sup> Լ. Ասմարյան, Վ. Թեքեյան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1971 թ., էջ 148:

<sup>2</sup> «Հորեսյան Վ. Թեքեյանի 40-ամյա գրական գործումներության», Փարիզ, 1933 թ., էջ 62:

լուրջան գերազում հղացումն է մարդ էակին... աստվածացումը, թևավորումն է մաքուր այն էանութին, որ կդառնա համապարփակ սեր և արարիչ մղում»<sup>3</sup>:

Բերված կարծիքները ծանրացնում են Աստծո այլաբանական ընկալման նժարը՝ «կատարելության գերազում հղացում», արդարության այլաբանական մարմնավորում, մեծ անհատ և այլն...

Թեքեյանն իր բոլոր գքքերում, իրոք, շատ ու շատ սոնետների եթեն ոչ նախավերշին, ապա վերշին եռատողում դիմում է Տիրոջը, և ի հակադրություն Ծ. Նարդունու բնորդշման՝ այդ Տերը ոչ թե Թեքեյանն ինքն է կամ ուժեղ անհատը, այլ կենդանի, մշտական, անփոփոխ Աստված: Մ. Հ. Անանիկանը գրում է. «Անիկա իր հավատն է՝ խարսխած Աստուծոն մը Վրա, որ իրական է և որ կապրի իր ասեղծած աշխարհին մեջ: Այդ Աստվածը հաճախ բանաստեղծը հուսախարության կմատն իր սիրուց և նախախնամության երևութական զանցառություններով, իր կարծեցյալ դաժան անտարբերությամբ: Բայց բանաստեղծը զայն չի լքեր բնավ: Ընդհակառակը, Աստված կմնա իր մարդկային և հայրենասիրական իդելերուն գերազում գործադրիչը»<sup>4</sup>:

Խոսելով «Աեր» ժողովածուի մասին, որն անուրանալիորեն Թեքեյանի բանաստեղծական հասունության վավերաթուղթը է, Ա. Չոպանյանը գրում է. «...քերթողը կմագերգե իր հոգեկան խոսակցությունը աշխարհի խորհուրդներուն և Աստուծո ստվերին մետ, կզգաս, որ հոն է բուն մարզը այս բանաստեղծին, ինչպես որ ան եղավ միակ մարզը Պոտլերի, Էտկար Փոխ և Վերլենի պես անզուգական բանաստեղծներու»<sup>5</sup>: Նույն գրադատի կարծիքը՝ եթե Տերյանը հոգեկան խոռվի մեցուկը ուզեց գտնել «ընկերական հեղափոխության կարմիր տեսիլին մեջ», Թեքեյանը «այդ սիրուին ու մեցուկը (իր այս հատորին մեջ-Աեր») կթվի փնտրել Աստծո հինավորց գաղափարին մեջ»<sup>6</sup>:

Եվ այնուամենայմիվ, ի՞նչ է Թեքեյանի համար Աստված: Նրա ողջ պոեզիան հեղեղված է աստվածաշնչան սիմվոլներով՝ այլազան բանաստեղծական պատկերներում և զգացողություններում և՛ սիրելգործության, և՛ մարդելգործության, և՛ հայերգության մեջ. հաց և զիմի՝ քրիստոնեական լիցքով, կնդրուկ ու բորվառ, սրբարույր մատուռ, համատարած խմկարկում, մանամա, լուսելեն պյուն, ժայռի տակ՝ շատորվան, մորենի, հարության փող, հարության օր, «անապատին մեջ իմկած ազմիվ հունու», հոգեբուս աղոթք, պատարագ ու լուսարար, օրինված սափոր, բարության զիմի, Լուսավորչի կանքեղ, աղամամութ, մեղքի բաժակ, օծյալ վեմ, ուստի տապանակ և այլն, և այլն: «Հրաշալի Հարություն» ժողովածուի խորագիրը այս իմաստով շատ բնորդ է. զիրքը «Փա՛ռ հրաշալի Հարության» բնաբանով բացելով՝ Վերշաբան-բանակի էլ է տալիս մեզ բանաստեղծը. «...անունը՝ «Հրաշալի Հարություն» գրեթե կրոնական իմաստով մը առած է. «Հրաշալին անշուշտ «հրաշքով» կնշանակե, և

<sup>3</sup> Վանե Վահան, Վ. Թ. բանաստեղծը, Թեքեյանի «Հատումտիրի» առաջարամից, Պելոութ, 1978 թ., էջ 25:

<sup>4</sup> «Հորելյան Վ. Թեքեյանի 40-ամյա գրական գործունեության», Փարիզ, 1933 թ., էջ 60:

<sup>5</sup> «Ապագա», 1 նույն, 1933 թ.:

<sup>6</sup> Նույն տեղում:

այս Հարությունը «Հարություն» է անցյալին, ամբողջ հոգիի մը անցյալին, և միայն բանաստեղծությունն է, որ այս հրաշքը կարելի կը նեն:

Այս և մյուս սիմվոլները Թեքելանի բանաստեղծական պատկերներում հայտնվում են իրեն մարդկային ամենատարբեր ապրումներ, խոհեր, զգացողություններ արտահայտելու ազմիվ առաքելությամբ և շատ հաճախ այնպիսի քերթվածներում, որոնք հոգևոր բովանդակություն բնավ չունեն: Բանաստեղծությունը ենթագիտակցական ոլորտի ծնունդ է, և եթե մարդը աստվածաշնչյան հիշյալ սիմվոլների բառագանձն ունի իրեն արարչանյութ, որեւն դրանք հյուսված են իր էությանը, սերտաճած, նույնացած դրա հետ: Նա այդպես է մտածում, զգում, այլ կերպ չի կարող: Եվ ո՞րն է ակունքը:

1913-ին գրված «Ա. Կարապետ Կեսարիո» քերթվածում հայտնվում են դեպի վանք տանող «ծանր, դժվար ճանապարհի» պատկերը, ձյունը... «բլուր բլոյ ետևե», սարահարթը, լեռը, խորհուրդը վերելքը («Կառքեն իշած կրալեն: Ձերմ հոգմած կինան», «Ամայության վրա ձյունին կիշնեն խորհուրդն իրիկվան») և արա՝ «Վանքն է հանկարծ...» և նախնիների ստվերներն իր հոգու հայացքի դեմ:

Իմ մեջս դուք եք հիմա, և բազմություն մ'եմ այսօր,  
Որ հավաքված դարերեն՝ շղթայաշատ ու հզոր,  
Կմուտենա քայլ առ քայլ, առամձին ինքը թափոր,  
Նույն տեղերուն, նոյն սուրբին և նույն Աստուծուն ուխտավոր...

Ինձի՛ համար այժմ Անոնք, զիս իրենց մեջը առած,  
Կթախանձեն, կաղորեն Սուրբին դրանը դիմաց,  
Որ սատափյա կապտորակ ճաճանչներով ողողված  
Իր փեղկերուն ընդմեջեն կտանի՛ միտքս առ Աստված...:

Թեքելանը կեսարացիների զավակ էր՝ իր արյան թավալումով և ոսկրածուծի բաղադրությամբ: 1925 թվականին տարիների մացառուսներում մոլորված մի միտք, մի երազ, վաղեմի մի իղձ այսի այցի գա, «համառորեն» բանաստեղծություն պիտի դառնա և հասնի մեզ «Մանկության իղձ մը» խորագրով: «Ինչպես» այս իղձն էր ծներ, - կուզեի սուրբ ըլլալ ես...»: Հետո այսի գա հիշողությունը այն միակ մեջքի, որ մանուկ Թեքելանի կարծիքով իրեն պիտի խանգարեր «սրբոց շարքին մեջ դասված»՝ Արքայության մեջ Աստծուն տեսնել, ու դասի պահին ցավից, վախից կուչ եկած՝ լալիս է ան ափերով դեմքը ծածկած: Ապա հայտնվում է հացի տոպրակը ուսից կախ կույր մուրացիկի տեսիլքը, և ինքը, որ շնչառապար վազում է նրա ետևից («գացի շիտակ իր վրա, քաշեցի ձեռքն ու պազի»):

Կաղորեի հորս հետ ամեն առտու ու գիշեր,  
Կխորհնեի ամեն տեղ զալիք կյանքիս, մահվան ալ,  
Տղա էի, կուզեի ես այն ատեն սուրբ ըլլալ...

Թեքելանը կեսարացիների զավակ էր՝ իր հավատով (թերևս պիտի գրեի՝ երբեմնի, կորուսայի, վերագտնված... Ո՞րն է բառը, որ կարող է միացնել այս որոշիչների իմաստները, ասել է՝ կարող է վիշտն մարդկային Հավատի պատմությունը), իր շերմեռանդրությամբ, իր աստվածավախությամբ, այդ, նենց աստվածավախությամբ նախ և առաջ: Աստվածավախությունից մինչև աստվածուրացություն մի քայլ է. ցանկացած ծայրամեր հոգեվիճակ զարմանալի փոխակերպումով հեշտությամբ կարող է վերածվել իր հակադիր վիճակին, ինչպես որ սրտանց ծիծաղը կարող է լացի փոխվել, ինչպես որ Պողոսը՝ քրիստոնյաների երբեմնի մոլեզին հալածիչը, ինքն է շուտով դառնում բոլոր ժամանակների ամենաչերմեռանդ քրիստոնյաներից մեկը:

Թեքելանի պարագան շատ բնական է. մանուկ օրերի մեծագույն ցնցումը Տիգրան եղբար մահն էր 1886-ին, որի բանաստեղծական փղձկումը «Առաջին մահը» արձակ քերթվածն է: Թեքելանն ինքը վկայում է, որ այս դեպքը շատ է ցնցել իրեն՝ առաջին հարվածը հասցնելով Աստծո հանդեպ իր հավատին: Հիշյալ գործը Թեքելանը ժամանակին ներկայացրել է Եղիա Տեմիրճիպաշյանի դատին, որն էլ ցնցվել է իր ներթին, առկայն բոլորովին այլ բանից. «Գիրդ սարսափ կազդէ իմծի, տղա: Ուրկե՛ առիր այշչափ տիրություն: Երազիդ մեջ Եղիային գերեզմա՞նը համբուրեցիր: Հայրդ ՄԵԽԻԽԱՏՈՎԻՒ՛Ղ է: Քանի՛ տարու ես... Գիտե՛ս, թե այդ զգացումը մինչև ուր կոտամի քեզ: Մինչև զգվաճք, որուն հանդեպ ահա ես իմ բոլոր ուժերս ժողոված կը մաքառիմ տարիներու ի վեր... Պամի՛ վերջին արցունքը, Վահա՛ն: Ան կիյան ոչ այն թեքելությամբ, որով ինկած է վաղամտիկ ընկերո՛ Տիգրան, այլ կապարի ծանրությամբ և իր մերքեւ կփշռն սիրտո՛: Ահա այստեղ՝ վերջին արցունքի մետ կապված՝ Տեմիրճիպաշյանը մի նոր Եղիա մարգարն է դառնում, պատա: Վերջին արցունքը պահած և ի վերջո վերջին արցունքի տակ փշրված Թեքելանի սիրտը աստվածամետ-աստվածամարտ թրթոռումի փոխվեց հավետ: Նամակագիրը (ի դեպ Տեմիրճիպաշյանի պատասխան-նամակը հրո ճարակ է դարձել Թեքելանի անձնական շատ ուրիշ թղթերի մեջ Պոլսի ներթական հրդեհներից մեջին ժամանակ: Թեքելանը, սակայն, բովանդակությունը հիշում է գրեթե բառացի) այսուհետև խորհուրդ է տալիս. «Վարդ առտու, Վահա՛ն, եկեղեցի գման և շապիկ հագիտ: Եվ այսուհետև արտասուրք պիրեւ երբեմն մետեղոց, բայց մտածումդ միշտ ողջերուն: Եվ ալ մի գրեր իմծի: Հրանդի՛՛ եղիր և մնացիր միշտ աշակերտ»<sup>10</sup>: Նրա ազդեցությունը պակելի առողջարար է համարում Տեմիրճիպաշյանը Թեքելանի համար:

<sup>7</sup> Տեմիրճիպաշյանը կարծում է, թե վաղամտիկ Տիգրանը Թեքելանի ընկերը է եղել, մինչդեռ իրականում «Առաջին մահը» արձակ քերթվածը պատասխ Թեքելանը գրել է իր Տիգրան եղբար մահվան մերագումով:

<sup>8</sup> Ա. Ալպոյանյան, Վ. Թեքելան (իր համրային մարդ և հրապարագիր), 1948-49 թթ., Գամիլու, էջ 106-107, ԳԱԹ, Վ. Թեքելանի ֆոն:

<sup>9</sup> Խոսքը ՄԵԽԸՐԸ Կյուրինյամի մասին է, որին աշակերտն է Թեքելանը Կերորմականում ուսամելու տարիներին:

<sup>10</sup> Ա. Ալպոյանյան, էջ 106-107:

Ութամյա Վահանը եղբոր հոգևարքի գիշերը աղոթքով է անցկացնում, հոգեցում աղոթքով. «Մտքիս ամբողջ պրկումներով» արտիս ու հոգիս անդունդները քրքրեցի՝ շամալով գտնել Անոր գութը շարժող ամենն աղվոր, ամենն հաճելի խոսք մը, բառ մը»: Բայց Տիգրանը մահանում է, և «ավելի խոր, քան այն փոսը, ուր հանգչի գացիր դուն, ո՞վ Տիգրան, անդունդ մը բացվեցավ իմ պատիկ հոգիսին առջն, ուր տարակույսի շվանեներում վրայնն ցնորեցուցիչ արագությամբ մը սամեցավ, կորավեցա՞վ իմ ամբողջ հավատքս»: Ի հետևամբ և ի լրում՝ 1906-ին գրում է «Կասկածը» բանաստեղծությունը՝ «Հավատքս հոն ձգեցի բզիկ-բզիկ, հեռավոր...»: Երբ իրեն լրում է նաև Հովսը...

Ու օր մըն ալ համրաքայլ եկավ Կասկածն ու կեցավ...

Իր կըտուցով կեռածայր, մագիլներով բզկտիչ

Ան տիեզերքը ամբողջ քանդեց, փշոնց քիչ առ քիչ...

Ինչպես ասում եմ՝ մնացյալը՝ լուսություն:

Առա այս դեպքն է եղել Թեքելամի հավատի փորձաքարը, և դրանից հետո տարիներ շարունակ «մտքի ամբողջ պրկումներով» փորձել է վանել «Անոր» կերպարը, որ ներկա էր իր մեջ անդնդիտ: «Նա, ում հետ կոյիվ տվեց՝ ազգային ցավին ի տես, Նա, ում իր անձնական դրամայի միակ մեղավորը կարծեց, պիտի հայտնվեր անվերջ, պիտի երևար ակամա խորանելող կայծկլտոցով, սրտում խեղովածով համդերձ՝ հասներ լեզվի ծայրին ու դառնար Տե՛ր, Տե՛ր, Տե՛ր... Կրկնում է բանաստեղծը աստվածութացության ամենահիետին ու աստվածաբայտնության ամենափառաթեթ պահերին: Տե՛ր: Թերևս ինքն էլ Մամդելշտամի Օման ասել է մի օր. «Գոսподи, сказали я по ошибке, сам того не думая сказать»<sup>11</sup>:

Պայքար է եղել, ինքնամարտություն՝ արյունոտ ու բյուծիչ, հավատը շողացել է ու խուս տվել, ո՞չ կարողացել է ուրանալ, և ո՞չ էլ հավատալ մինչև վերջ: Այս հոգեմարտի բանաստեղծական վկայությունն է «Թրթոռում» քերթվածը.

Թերևս ալ չե՞ս պահանջեր, ով Լուս ամիուն և անհաս,

Որ խաղաղիմ գունելով կամ մերժելով Քեզ խապո.

Կնախընտրես, որ ըլլա միշտ որոնում մը ներկաս

Եվ ժամանում Քեզի ըլլա շլացք մը անճառ...

Սակայն ի՞նչպես, Աստված իմ, տըվիր շընորհի ոմանց,

Ամեն վայրկյան, ամեն տեղ Քեզ ըզգալու և ինծի՝

Խելակորուս մազմիսին միայն թրթոռ՝ մը անանց... (1927 թ.)

<sup>11</sup> Осип Мандельштам, Стихотворения, проза, записные книжки, из книги "Камень", Ереван, 1989 г., ст. 163.

Այս պարագայում թերևս այնքան էլ կարևոր չէ, թե երբ է եղել Թեքեյանի «դարձը», քանի որ Աստված միշտ ներկա է եղել իր մեջ. անխվելի, անխօնի ներկայություն: Կարևոր չէ, իմարկե, նաև այն տեսանկյունից, որ Թեքեյանի բոլոր գրքերը նեղեղված են աստվածամարտության և հայունության, կասկածի ու հույսի քերթվածվկայություններով, երա պոեզիայի զգայի մասը «ի խորոց սրտի խոսք ընդ Աստծո» է: Եվ չկա ոչ մի օրինաչափություն, որ մեզ իրավունք տա ասելու. ահա այս թվականից դարձի է եկել կամ այս օրից նորից մինչև աքաղաղի կանչելը երեք անգամ հասցել է ուրանավ:

Ի ենք մագնիսի սիմվոլը Թեքեյանի պոեզիայում պիտի հայտնվի նաև մեկ տարի անց՝ 1928-ին, «Եռանկյունը հնչյակում, որը նրա կենսափիլիստիալյության բանատեղծական խոտցումն է. մարդոց՝ միկրոտիեզերքից են եղում ու դարձալ մարդուն են վերադառնում աշխարհի բոլոր ճամփաներն ու տարամետ գաղափարները: Դեպի բնություն, դեպի Արարիչը, բայց, միևնույն է, մարդը մնում է մարդ՝ իր մարդկային ցավով, կարծրացած, ճաքած անոթի խորքում տվայտող մեղսական ու լուսամետ իր հոգով.

Երբեմն մարդն է, որ զիս իբրև մագնիս կքաշն  
Ու բնությունը երբեմն և լոկ երբեմն ալ Աստված...  
Մեկեն զգված, մյուսն խոնջ և երրորդեն մերժված՝  
Այս եռանկյան մեջ անվերջ կվազվեմ ես, բաբե՛...

Ու կմնամ նորեն մոտն ամենեն շատ մարդ անկյան,  
Ո՞չ կմտնեմ անոր մեջ, կիարմարիմ իր չափին,  
Եվ կվարծեմ, թե անկեն կելլեն, անոր մը հանգին  
Մյուս անկյուններն հորինող ուղիղ գիծերն անսահման:

Թեքեյանի աստվածերգությանը բնորոշ է իր իսկ որակումով զինատառով թրբումը հենց: 1929-ին Ա. Տատյանը նամակով Թեքեյանին հայտնում է վաճական դառնալու իր որոշումը: Բանաստեղծը խորհուրդ չի տալիս<sup>12</sup> ավելացնելով. «Տես, թե այս խորհուրդներես ինչ կրնաս առնել: Սա՛ ալ հայտնեմ, որ անոնք կուգան մեկն մը, որ հավատքին պետք ու քաղցրությունը կզգա, ուրիշներու մոտ զայն խորապես կիարգեն, բայց որ իր հաշվույն, զայն կանուխ կորսմանելն ետք, քանի մը տարի առաջ հրճվանքով զգաց անոր իրեն մոտենալը, բայց ան կամ ինք մնացին ճամբան, ու հիմա գրեթե հուս չունի, որ զայն ամբողջովին պիտի գրկե իր մեջը»<sup>13</sup>: Ի դեպ աղիթն օգտագործելով հիշենք, որ Թեքեյանը, շատ բարձր գմանատեղով Օտ-

<sup>12</sup> Թեքեյանը Տատյանին խորհուրդ չի տալիս վաճական դառնալ, բայց նա ոչ թե վաճակամության է դեռ առհասարակ, այլ Տատյանի՝ վաճական դառնալուն: Թեքեյանը դեմք է եղել կուսակրոպության վերացմանը:

<sup>13</sup> Վ. Թեքեյան, Նամականի, խմբագրումը և ծամոթագրությունները՝ Ավետիս Գ. Սամայանի, հրատակություն Թեքեյան մշակութային միության, 1983 թ., էջ 306:

յանին, այնուամենայնիվ ներքին «վեճ» է ունեցել նրա հետ՝ մեծ երգիծաբանի անհավատ լինելով պատճառով:

Պարզաբանություն կլինի կարծելը, թե իր արձակ «Աղոթքը» Թեքեյանը գրել է աստվածաբանության հազվագյուտ ներշնչանքի պահին, վայրկյանի ազդեցության տակ, քանի որ, ինչպես ինքն է վկայում, «Աշխարհիս վրա կան մարդիկ, որ կրավատան, մարդիկ կան, որ չեն հավատար: Ես աննցմեն եմ, որ կրավատան: Հիմա» միայն կրավատամ և մի՞թե այսօր սկսա աղոթել: Կրնամ ըսել, որ կյանքին մեջ օր մը չէ եղած, որ չաղոթեն»<sup>14</sup>:

Աղոթքը ևս ներքնազոր կարողություն է, աղոթքի պահանջը ինքնին շատ բան է վկայում: 1924-ին գրված չափածո «Աղոթքում» բանաստեղծը աղոթքի շնորհ է աղերսում Տիրոջից.

Միմիայն դուն, իմ անցավոր, ախտավոր  
Սերերու տեղ ինձ կրնաս  
Բարձունքներու ներշնչել սերը հզոր  
Եվ ցողել գութե՛ վըրաս...

Բայց այս շնորհն, այս բախտը իմն է արդեն,  
Ինձ կթվի, Աստված իմ,  
Որ աղոթքին լուսաստիճան սանդուղեն  
Համրորեն քեզ կմատչիմ...

«Հրաշալի Հարություն» ժողովածություն տեղ գտած «Այսչափ ետքը» քերթվածում Թեքեյանը փառաբանում է Արարշին՝ իրեն «այսչափ ետքը» մաքուր սեր շնորհելու համար և երազում աստվածապարզն նորահայտ սիրո մեջ «վալ իմ նոգիիս ժանզը իին»:

Թեքեյանական աստվածերգության մեջ, սակայն, շատ հաճախ բանաստեղծական խորհ հատում է անձնականության սահմանը.

Ծնորի ու վայելք ես երբեք ունեցածես ավելի  
Չխնդրեցի ինձ համար և միայն Քեզ դիմեցի  
Խորութենեն իմ ցավիս, այլոց ցավին համար մերթ... («Որոնում», 1925 թ.)

Նրա աստվածամարտության մի եզրը, իրոք, մարդ արարածի կամ ազգային ճակատագրի սեն է, իսկ մյուսը՝ անուրանալիորեն իր «խոշոր ցավը», որ «Հեծնծանքի» է փոխվում.

Իւնանե ի զատ ի՞նչ օրինյալ, ի՞նչ բախտավոր են մարդիկ,

<sup>14</sup> «Մամուկի մեջ տպված և ամսիավ երկնր և մամակներ վ. Թեքեյանեն», Բավարքն և ծանոթագրունց դոկտ. Վաչեն Ղազարյան, Պելոտիք, 1987 թ., էջ 60:

Հետին աղքատն ալ երբեմն իր պատիկ գանձն է զոտած,  
Զիս ամոր և ամենուն նման ըրե՛, ով Աստված...

Փոքրուց սիրազուրկ այս մարդը ցմաք սիրազուրկ մնալու արմատացած համոզ-  
մունք է ունեցել՝ ինչ-որ տեղ էլ Բենց իճրճ իրեն դատապարտելով մնակության։  
Մենասիրությունը, ավելի ճիշտ՝ մարդախոսաւթյունը տարիների ժեւ պիտի բնա-  
վորություն դառնար, դառնար իր երկրորդ եաը։ Իր «անպատճեն ծնունդի»<sup>15</sup>, անսեր-  
անզորով մանկության համար թեքեցանն ըմբռատացել է «քախտին դեմ դրուժան»։  
Տարբեր տարիների գրված բանաստեղծություններում բողոքը պարբերաբար  
ուղղվում է Աստծո դեմ՝ թե «զիս զոկեր էր Աստված», «ոչ ոք ինձ չափ կրեց անզու-  
թյունը երկնի» ...

Բայց սիրու հաճախ, շատ հաճախ միմիայն ցավ մ'է ինձի,  
Իր պատճառեն պարպած՝  
Ցավ տարածուն, վաղ ճշական հարվածի,  
Զոր տված է ինձ Աստված («Սիրու»):

Նրան մնում է «հետին մուրացկանի պես» աշխարհից խնդրել սիրո իր օրաբա-  
ժինը և «զգուած ոչ մեկ տեղ՝ պիտի գնամ աղբյուահմ՝ Ավելցուկներ ժողվելու անո-  
թության դարման»։ Եվ նորից ու նորից՝ ցավազնորեն անհույս համոզմունքը. «Ող-  
բերգությունն այս անհույս պիտի տևե ա'լ այսպես»։

Աստվածամարտությունը ձուլվում է ինքնամարտությանը՝ ավելի անողոք և  
առյունքան անհույս՝ մարդու մեղսականության համոզմունքով։

Իմ արյումիս մեջ սիրո շիթ մը դրած էր Աստված,  
Ես զայն տիղմով շաղեցի ու կշանամ ալ իզուր  
Պղծութեննե անշատել իր իսկությունը մաքուր («Սեր»):

«Թշվառական, ի՞նչ ըրիր... ըսե, երկիմքդ ի՞նչ ըրիր», -գրում է 1924-ին «Երկիմք  
Կորուպյալ» բանաստեղծության մեջ։

Իր սերը մեղքի բաժակի հատակին է գտնում նա, ավաղ, ու երբ շուրջը բարձրա-  
նում է մեղքերի պատը, սիրազուրկ «խեղճ մարդը» ծաղրում է սիրո աստվածային

<sup>15</sup> Մի շատ տխուր պատմություն է դա, արկածով, «դիպվածավ ծնած» տղայի պատմությունը, որը դժբախտություն էր ունեցել 40-ամյա մոր հիմքերորդ գավակը լինելու։ Կեսարացիների հնոց աղաթով չափահաս զավակներ ունեցող կանց համար ամոթ էր զավակ ունենալը, իսկ այդ անցանկալի էակին սիրելը էլ ամոթմերի ամոթմ էր, և «մետնաբար մայրեր վերապահ կըլլայիմ երիտասարդ մոր մը խամ-  
դաղատանքը ցուց չտալով իրենց պատիկին համեսես», գրում է Թ.-ի Կեմազգիրը՝ Ա. Ալպոյանցամը, և  
ավելացնում, որ դա եղել է Թեքեյանի «կյանքին առաջին դառնությունը, որ գուցն միմէն վեր իր ազն-  
ցությունը ունեցած է» (թիվ 8 ծանոթագրություն, էջ 2):

բնությունը ... եթե Աստծո հավիտյանը ևս նույնքան է ապրում, որքան հավիտյան ները սիրու և

Եթե Աստված այնքան չար, այնքան վայրագ, վատ է, որ  
Պար մը առաջ զգվաճքին համար ումի լոկ քրքիչ,  
Եթե ամոր ալ անցած տեղն է ավեր ու արյուն,  
Այո՛, այո՛, սերն ումի աստվածային բնություն...:

Եվ սրանից մինչև աստվածութացություն մի քայլ կա միայն՝ «գիտեմ գաղտնիք մ'ահավոր.- այս աստվածն է սուս աստված», որ խարում է մարդուն, և որին խարում է մարդը, ու այս հավիտենական գուպարը՝ «դիմակաթափ, ծաղրադեմ» պիտի ավարտվի երկուստեր մահով և նշանավորվի մարդկային սրտից աքսորված «քուն Աստծո» վերադարձով և նոր մարդու ծնունդով:

Լ. Ասմարյանը ճիշտ է նկատել. Թեքեյանի աստվածերգությունը Եղեռնից հետո նոր ուժով է բորբոքվում աստվածամարտության կրակով: Բանաստեղծը 1916-ին իրար ետևից գրում է «Խնդանք, եղբայրներ», «Պիտի ըսենք Աստուծո», «Ադամամուր» քերթվածները, որոնք մերժ Աստծո «ժանտ երեսին» խնդալու կոչ են, մերժ Աստծոց դժոխքը ժառանգելու խնդրանք («չէ» որ զայն լավ կճանչընանք,- հեզանում է բանաստեղծը և ավելացնում, - և թուրքերուն հատկացուր արքայությունի անբավարար ու մերժ էլ սրտակեղեք ավարում.

Այնքան երազ, այնքան ճիզ, այնքան տաժանք ու տանջանք  
Զու՛ր են եղեր, այնպես չէ», ով ահավոր դուն Աստված,  
Որուն սակայն մենք այնքան, այնքան էինք հուսացած...

Այս տողերի հեղինակը 1918-ին կգրի «Պիտի մոռնանքը» Երկիր վերադառնալու և նրա սրտի օքարկը լսելու հույսով, երբ կսկիծի հետ հայորդիք մոռանան նաև իրենց հոգիներն այրու Աստեղությունը, «մարդոց չարիքը», «աստծո չարիքը», կարողանան «նորեն երգել, սիրել անարգել» ու ասես չհավատալով, չհամարձակվելով հավատալ՝ կաղերսի:

Սակայն, ո՞վ Տեր, մոտեցուր այն առավոտն, որ նորեն  
Պիտի կրնանք քեզ օրինել հոգիներուն մեր խորեն...

Թեքեյանական աղոթքների շարքում առանձնանում է «Դառն աղոթքը», որով Աստծոց ազգապահ ուժ ու կորով է խնդրում անկարող ոխ ու վիճժի փոխարեն: Վերընջուղան հավատով է զրկած նաև «Արդյոք ծոն՞ր է» քերթվածը:

Ինչպես ինքն է վկայում ողջ կյանքի ընթացքում չի դադարել «աղոթել». կապը միշտ եղել է՝ հոգերուն աղոթքի, աստվածամերժ բողոքի, աստվածամարտ ցառում կամ ներման աղերսի տեսքով:

Թեքեանական աստվածերգության մեջ կան Նարեկացու ոգով ու շնչով գրված բանաստեղծություններ՝ մեղսամաքրման երթացով հովսով, աստվածամտութերկայի լուղած վերմումներով («Դուն այս հովսն ինձ կներես հիմա, Տե՛ր»)...

Եվ կթվի ինձ արդեն, թե գործն ուրիշ ոչինչ էր,  
Բայց թե մարմինս խավար, և թե հոգիս այժմ արա,  
Իր բանտն իր հետ քաշեղով, առ Քեզ տակա'վ կամբառնա...  
(«Գուբը», 1924):

1925 թվագրված «Կզգամ» քերթվածում բանաստեղծական մտահայտնությամբ տեսնում է Աստծո ձեռքը՝ իրն երկարած, և իր հին հավատի հրով ողողվելու տեսնչը՝ դարձալ հազիկ պլայլուն հովսով ակաղձուն («Թե լքված չե՛մ վերջապես, թե սերդ զիս կհոգա») ավելի որոշակի է դառնում:

«Ո՞վ ծնող արևներուն բյուրավոր», «ո՞վ դիտող խորատես», «Դում՝ արև պայծառ», «ո՞վ Լուս անհուն և անհաս», «ո՞վ Վարդապետ, հավերժական Լիություն». ամա Թե՛քանին «Խոսք ընդ Աստծոյի» կոչականները:

Դարձալ 1924-ին գրված «Երբ կխորիմ»-ում չգոյության սարսափից և ոչնչության վիճից բանաստեղծին հանում է նույն տարտամ հովսը՝ երկնարույր խաղաղությամբ պարուրելով սիրտը.

- Ինձալու տեղ կելլեմ թերևս, ու իր թեռնն ազատ հոգիս՝  
Գիրկետ մեկնած, թերևս, ո՞վ Տեր, պիտի գրկիդ մեջ ընդունիս...

Աստվածաշնչան նահապետների պես Թեքեանն էլ մի օր պիտի ասի՝ «Ահա ե՛ս, ով Տեր», ու նորից նույն պատկերը՝ խավարչուտ վիճը, «որոցառող, խանող ճիզը զուր», և նորից ու նորից Թրթոռումը՝ մի քիչ թաքնված.

Նայե՛ մարմինիս՝ այրվելու մոտ ծառ,  
Նայե՛ հոգիիս՝ մարեկու մոտ կայծ,  
Եվ ինձի օգնեն հիմա, ով Աստված,  
Կամ զիս սուզելով անըսպառ խավար  
Քառական մեջ լուռ քո տիեզերքին,  
Կամ հասցնելո՞վ զիս լուսիդ վճիտ:

«Որոնում» հնչյակը նույնպես «շատ աղոտ մի լուսի», շատ աղոտ մի հովսի չափած պատմությունն է՝ «Գիտեմ, թե կաս Դուն, ով Տեր և ինձ երեւեն երևացար Եվ որոնումն հիմա քո ապացուցու է արդեն» տողով կնքված, բայց զարմանալի մի հանգուցալուծումով. Պ՞րան է պատճառն այսօր Աստծուն որոնելու... Բանաստեղծի պատասխանը՝ «Գուցեն խոցե՛ն պիտի զիս վաղը քու չար ոգիներոդ»: Գուցեն սա դարձալ թեքեանական այն մորի այլագոյացումն է, ըստ որի մեղսագործման պահին, դրամից հետո մարդն ավելի է մոտենում Աստծուն.

Սակայն՝ սուկո՞ւմ և հրա՛շը՝ մեղքեն ալ դում կրառնեն  
Եվ ավելի ինձի մոտ անոր մեջն ես, ով Աստված («Հառաչանք», 1925)

Նոյն բանաստեղծության մեջ նա Արարչին թշնամի-բարեկամ է անվանում, որը  
ե՛ւ պատիճն է, ե՛ւ վարձը, մե՛րթ ընծայվում է՝ որպես հաց, մե՛րթ կարծրանում իբ-  
րև ին վեմ:

Թեքեյանական աստվածերգությունում կան նաև քերթվածներ, որոնք սաղմո-  
սերգուի ճաքած շուրթերից են եղել ասես: Ահա «Հեծեծանքը», որով Թեքեյանը նա-  
խաստեղծ մեղքի համար էլ է ծնկածալ «մեղա» ասում.

Մեղա՝ հոգվուս, երիկամացս խորեն,  
Մեղա, ով Տեր, սկզբնական իմ մեղքիս...

Ու հաջորդում են մեկը մյուսից կատարյալ պատկերներ՝ սաղմոսերգուի գրչին  
արժանի. «Ժայռերու մեջ զիս հոյ մշորի արգավանդ, Եվ այդ հոյին շիթ մը անձնև  
զլացար», «Ընորհներու համար անոթ մը ընտիր Զիս շինեցիր ու լեցուցիր զայն,  
ավա՛ղ, Բայց հարվածով մը զայն հետո ենդեքցիր»: Աստված սիրածուի մի սիրտ է  
ընծայել իրեն, սիրո պալատ, որն իր անսվահ մնացած սիրո համար բանտ է դար-  
ձել: Այս հեծեծանքը ամենուն տառապանքով ոգված մեղայականն է մի մարդու, «ում  
զլյուս արդեն կձյունե», և ծնկները «արդեն, արդեն կդորան...»:

1929-ին Թեքեյանը գրում է իր «Ըվարումները» շոշափելով Քրիստոնեության  
հետ հավերժապես կապվող հարցեր, որոնք արդեն քսան դար է, ինչ եղել և մնում  
են հավատի պատրաստ շատ ու շատ հոգիների զայթակղության քարն ու սայթաք-  
ման եզրը: Ինչո՞ւ է մարդը մարդուն ոսոխ, ինչո՞ւ է ոտնակոխ լինում տկարը, եղ-  
բայրը զարմվում եղբորից, և ինչո՞ւ բոլորն ել օրինված սափոր չեմ՝ «լեցուն բարու-  
թյան զինով հզոր», ինչպես է, որ դարերի հետ շատացել են միայն Զարիքն ու  
Թշվառությունը, Սերը պարտվում է Մարի դեմ, ու մարդու հոգին սպառել է իմբն  
իրեն: Աստծո պատապսանն անփոփոխ է. լսկում է մեղմ ու խիստ մի ձայն.

-Բայց դուն, գոնե դուն կըրնա՞ս ըլլալ այն,  
Զոր ամբումաթիվ ու պայծառաթև  
Քո շուրջդ գտնել կցանկաս միայն:

Մարդը՝ արարչագործության պսակը, միակն է, որ մեծագուն շնորհ է ստացել՝  
ունենալու իր մեջ Աստծո Սիրուց մի կայծ և մտքի ուժը՝ բոլոր ուժերից հզոր ու նաև  
Աստծուն նմանվելու, առ Աստված հառնելու, կատարելակերպվելու ձգտումը: Կամ  
գուցե՞ն՝

Թե իմ կամքս է, որ մարդն ինձ բարձրանա  
իր իսկ կրծերու զոհակուտին վրա:

Թեքելանական վերջին «Ծվարումը» Բարձրյալ աղբյուրի մեջ շուտով սուզվելու իդուվ, արդարության գործը Աստծուն հանձնելու և «սիրո հացին խմոր» լինելու կոչով է պատկում:

«Սուրբ տեղեր» վերնագրով քերթվածը Աստծո հավերժական Աերկայության և տրտմաշող կարոտի դրոշմն ունի: Մի տեսակ համատարած լրվածություն, անամոք մենություն կա այն վայրերում, որտեղով անցել է Նա ու... զմացել: Կա մի համակ սպասում իր հարատևության մեջ մի պահ քարացած.

Խոկմ Աստուծո դեռ կծիա, կծիսա,  
Ամպի ծվեճ, կայծակի բոց մը ինչպես,  
Այս հովտին մեջ, այս լուսնորուն կողին վրա...

Հին հպումով գետը կերպա փրփրադեզ,  
Միւզ Շովն ալ է կարծես սուրբի աչք մը բաց,  
Աչք մ'երկնապիշ, իր արցունքին մեջ սառած...

Թեքելանի աստվածերգության մեջ ամենակատարյալն անշուշտ «Գալիլիական» է՝ սուրբ երկրի, բողի, նրան հպված օդի, նրան իր գիրկա առած երկնքի դեմ երկուդած խոնարհումով գրված.

Գալիլիական այս հընաշող աստղերում  
Ներքն հոգին կարտուա աս գիշեր...  
Հոս էր ուրեմն, որ շրջեցավ Սերն ամհուն,  
Երկիրն ամբողջ, երկիմքն անգամ դյուեռի Սեր...

Նրա աստվածերգության ամենակարևոր պահը, իր իսկ որակած հավերժական թրթումն է, իսկ Աստված իր համար Սեր է նախ և առաջ, համակ Սեր, սեր անհուն, ու («Տեր, եթե դուն իմ ալ շրջումքս բանաս») Թեքելանը օրինում է Աստծուն նախ՝ իրեն մարդ ծնելու և Տիրոջ անհուն և անհաս լուսը տեսնելու, ապա՝ տատասկների ու ժայռերի միջից սիրո ծաղիկը գտնելու և ի վերջո՞ ոլոր-մոլոր ուղիմերով Աստծուն հասնելու շնորհի համար: Այս քերթվածը իր խորքում պահում է այդ փոքրիկ հուսը: Եվ այս ամենի հետ, այս ամենից հետո մեկ այլ տեղ դարձյալ՝ օրինություն ու փառք:

Օ՛՛, Քեզի փառք, գոհություն և օրինություն, ո՛Վ Աստված...  
Գալարեցի եթե զիս տենչաճմերուս մեջ ամել,  
Անոնց անհուն կսկիծն հետո տվիր վայելել  
Երջանկությունն ստեղծման՝ (տաղերու մեջ դաշնակված):

Թեքելանի աստվածաբանության մեջ թերևս սա ամենակարևոր կետն է՝ արարման մեջ, արարման միջոցով՝ աստվածանմանության, կատարելակերպման շնորհ՝ սիրո պայծառությամբ կմքված: Նա մայրերին արվեստագետներ է կոչում, ո-

րոնց գեղարվեստական գործերը իրենց զավակներն են: Ու կրկին խորքում սերն է: Եվ իգուր չէ, որ «Զավակ» քերթվածում ամզավակ մարդու իր տառապանքը խորապես աստվածաշնչյան հոգեբանական մեկնություն է ստանում:

Բայց դում, անհուն զավկի սեր, իմշայե՞ս իմ մեջս իմկար  
Անապատին մեջ իմկած ազնիվ հունտի մը զման...

Այս բանաստեղծական պատկերը մերքին աղերսով կապվում է Հիսուսի «Սերմ-Անցածի առակի» մետք՝ աստվածային խոսքի անմարտության համեմատության եզրող դարձնելով կյանքի բնական հերթագայության, սերնդափոխության խորհուրդը:

Իր չունեցած զավակի կարոտը, սերը, մանկությունից արտի խորքում փայփայած այս մարդը ինքն իր մեջ մեռած, հանգած լինելու ցավագին հանողմունքը գերեզման է տարել մետք՝ կյանքում անվերջ որոնելով բնական ու այնքան մարդկային «անմարտությունը». «Երբ ես ծոխ, ան բարձրանար քովս ի վեր... ու նո՞ր արև՝ աչքին մեջ աչքըս գոցվեր...»:

Թեքեյանին Աստծո դեմ է հանել նաև ահա այս ցավը.

Զավկի մը շնորհն անզամ, ով Տեր, զլացար  
Իսձի ընդմիջու, և այդ մասունքը սիրուս  
Արգիլեցիր փականքներու տակ անհուս,  
Եվ զիս իմ մեջս սպանմեցի՛ր չարաչար...

Օտար տղոց աչվըներուն, հոգվովն մեջ  
Դողդղագին պիտի տղա՛ս որոնեմ,  
Եվ անծանոթ՝ պիտի մեռնի՛մ անոնց դեմ...

Իր փնտրած սերերից, իր խնդրած սերերից և իր կորցրած սերերից ամենացավագինը թերևս անապատի մեջ ընկած այս «ազնիվ հունտը»՝ «զավկի սերն» է եղել՝ «Սեր, որ ինձմեն դեպի իսձ կը մեր շրջան մը անձայր»: Բնության աստվածադիր կարգի, բնական հերթագայության անձայր շրջանի մասնիկը լինելու փափազը, արարման մեջ ու արարման միջոցով յուրովի անմարհանալու, սիրելով սիրվելու, սեր սերմանելու հղջը թեքեյանը ինչ-որ տեղ կապում է նաև «զավկի շնորհի» մետք:

Չունեցած զավակի կարոտը կրկնապատկում է սիրազորկ մարդու իր տառապանքը, ու իրեն մնում է միայն երջանկությունն ստեղծման՝ «տաղերու մեջ դաշնակված...»: Բանաստեղծության խորքում սակայն սերն է կրկին, սիրո կարոտը, այնպես որ սահմանումի ուժ կարող է ստանալ թեքեյանի այն միտքը, ըստ որի «Ամեն աղվոր բամի խորը սերն է, բանաստեղծություն-սեր: Բնությունը աղվոր է. բնությունը բանաստեղծությամբ և արվեստով ստեղծված է. բնությունը ստեղծող սերը աստ-

վածային սեր մըն է. ուրեմն Աստված կա, բանաստեղծ-արվեստագետ Աստված մը»<sup>16</sup>:

Աստծո գոյությամ՝ սիրո կովանը փաստորնն ամենազորեղն է ըստ Թեքեյանի: «Ամեն սեր Աստուծմն կուգա ու Աստուծո կերթա,- գրում է Թեքեյանը Ա. Անդրեասյանին 1934-ին, - այդ ճամրում վրա երկու վերջին հանգրվաններն են ազգության և մարդկության սերերը... Սերն ըլլալով սիրողին կողմէ ամնամության տեսը սիրվածի՛ կարելի չէ լավ սիրել այդ մեծ էակները՝ ազգ և մարդկություն (մեզ այնչափ պարփակող իրենց մեջ, որ անոնցմով մեզ ալ հավերժացած կզգանք) առանց հավիտենության աղբյուրի՛ Անմամին հավատալու»<sup>17</sup>:

Իր արձակ «Աղոթքում» նա թերում է ևս մի կովան. «Այս աշխարհին մեջ այնքան անիրավություններ կան, և այնքան խեղճ է մարդս, որ մեր մերսը գտնվող արդարության զգացումը և մեծության զգացումը մեզի կսորվեցնեն, թե այս աշխարհը անցք մը չէ միայն, կամորք մը... Անրդաշնակության, տիեզերական կարգ, ամենակարող զորություն մը ու ամենագետ իմացականություն մը այս մեծ շինվածքին ճարտարապետն է եղած»<sup>18</sup>: Բայց դարձյալ գալիս է մի պահ, երբ

ԵՎ հույսը հիմա ու տենչանքն անգամ  
Հիմա նըվաղեր, մոտ են մարեղու,  
Եղեք է աշխարհն ալ պատ ահարկու...

Գիշեր ու ցերեկ Աստծուն փնտրել ու... հոգմել է ինքը.

Բայց ի փոխարեն հիմա կհավատամ  
Միհակ մեծ սիրովն զիս ծնող հողին,  
Որ այտի զիս վաղն ընդունի կրկին....:

1940-ին 62-ամյա Թեքեյանը գրում է «Դեպի Քեզ» հնչյակը, որի խորագիրն ինք-պահ խոսում է. նույն է ճանապարհը, նույն է հասցեն՝ դեպի քեզ և նորից՝ «մի քանի խեղճ քայլ նեռունեն...»: Եվ թթողումն էլի կա՝ անհուս որոնման տեսքով.

ԵՎ կըսեմ անհուս, որ եթեն կաս իսկ,  
Ով Աստված, Դում, և ես նավ անտեր  
Ի զո՞ր կորուն Քեզ իբրև խարիսխ...

Գուցեն դարձյալ իր «ծովությունն» է պատճառը, որ անզոր մանուկի պես ընկնելուց հետո չի կանգնում կրկին: Սակայն այս անգամ կյանքի վերջում Թղթողումը հրաշքով փոխվում է հոգեխոնարին հավատի.

16 «Բանաստեղծության և արվեստին վրան», Զվարթնեց, 1929 թ., թիվ 6-7, էջ 243-244:

17 Նամականի, էջ 370:

18 Տե՛ս թիվ 14 ծանոթագրությունը:

Ես՝ ձկուղի մեջ. Դում՝ արև պայծառ,  
Ինչպե՞ս ուրանալ Քեզ կրնամ, երբ ե՞ս  
Պետք է բարձրանամ ու գամ մինչև Քեզ...

Ուշարժան է նաև այն, որ բանաստեղծը գրեթե միշտ գլխագիր է դիմում Տիրոջը, որն իր համար ոչ թե սուկ արդարության, մաքրության, լիության, կատարելության մարմնավորում է, այլաբանական մի կերպար, այլ, ինչպես համոզվեցինք իր տաղերի քննությունից, միանգամայն իրական, հուսացված, փառաբանված, ինչպես Աստվածաշունչն է որակում Կենդանի Աստված, որին նա դիմում է անանձնական, համամարդկային խորի եզերքից, աստվածային սիրո հորդումով:

Թեքեյանի «Հաշվեհարդարը» իր հոգեաշխարհի, բանաստեղծական աշխարհի ամենադիպուկ քննութագիրն է: Քրիստոնեությունը Թեքեյանի արյան մեջ է՝ հյուսված իր եսի հենքաթելերին և գուցե եսից էլ անդին: Ու եթե զրա աստվածերգությունը մինչևսկս մնար «Հաշվեհարդարի» անահիման սահմաններում, Քրիստոնեական Սեր-Աստծո պատկերը միանգամայն որոշակի կլիմեր, և միանգամայն անհմաստ՝ Թեքեյանի հավատի հարցի վիճարկումը: Ո՞րն էր կյանքից իրեն մնացածը՝ «ինչ որ տվի ուրիշին, տարօրինակ, այն միայն», «խանդաղատանք մը ծածուկ», «օրինություններ անհմաց»....:

Ինչ որ տվի ուրիշին, վերադարձավ անուշցած  
Ու զորացած՝ հոգիին մեջ մնալու հավիտյան...

սա մեծարենցյան անանձնական սիրո, անանձնական ուրախության երկվորյակն է՝ գեղարվեստորեն նույնքան կատարյալ ու հմայիչ:

Ինչ որ տարավ Սերն ինձմեն, չկորսմցուց զայն Աստված,  
Տվավ ինձ ետ ու ըրավ կյանքս անով միշտ բուրյան....

Ու չեմ ըսեր՝ «ինչ մնաց», ի՞նչ կմնա հողին տակ  
Եղեգներեն դյուրաթեք, կաղմիներեն հաստաբուն.  
Արնն ըմպած ըլլալու միսիթարանքը անհուն:

Սա համակերպում չէ և ոչ էլ միսիթարություն՝ առ ի չգոյե լավագույնի: Ծածուկ խանդաղատանքի, անհմաց օրինությունների, անշահիմնդիր, անմնացորդ սիրո ու նվիրումի երգն է սա, ամենահսկական մի խոնարհում աստվածային կարգի, խաղաղ ու իմաստում գոյության առաջ:

